

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԼԱՅՊՑԻԳՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐԵՐՏ ՄՈՒՇԵՂՑԱՆ

1893—1895 թթ. Ավետիք Իսահակյանը որպես ազատ ունկնդիր սովորել է Լայպցիգի համալսարանում: Այստեղ՝ Գերմանիայում, նրա գրիչը կյանքի կոչեց մի շարք բանաստեղծություններ, որոնք կազմեցին բանաստեղծի արտասահմանյան երկու տարվա կյանքի քնարական տարեգրությունը:

Ներկա հոդվածում առաջին անգամ տպագրվում են Լայպցիգում գրած մի քանի ոտանավոր, որ մինչ այժմ մնացել են անտիպ. դրանք են՝ «Հուլի փշում է լեռների լանջից», «Միրտա լիճ էր—ջինջ ու լուկ», «Նվեր՝ սիրելի քույր-Շուշիկին իր եղբայր-Ավետիքից», «Պատանու գերեզմանը», «Սև վշտերը մշուշի պես», ինչպես նաև օգտագործված են այլ ոտանավորների նախնական բնագրեր՝ «Բանաստեղծը», «Երազ տեսա», «Ուտենու տակ մենակ նստած», «Գիտեմ խաչդ ծա՛նր է, հսկա՛», «Ես շեմ ուզում արե ցուլա»: Վերջին երկուսը լույս են տեսել միայն նախահեղափոխական հրատարակություններում¹:

Մինչև Լայպցիգ հասնելը՝ 1893 թ. սեպտեմբերի 8-ին, բանաստեղծը կանգ է առել Սաքսոնիայի մայրաքաղաք Դրեզդենում, որը հուշակված էր իր ճարտարարվեստով և թագավորական պատկերասրահով: Այստեղ նա գրել է «Մայրիկիս» (սկզբնապես «Նվեր մայրիկիս») բանաստեղծությունը, որով էլ Իսահակյանի պոեզիայում ծայր է առնում մայրական սիրո թեման:

Լայպցիգից մոտ 15 կմ հարավ գտնվում է Օբերհոլց կոչված անտառը և համանուն փոքրիկ բնակավայրը, ուր 1893 թ. սեպտեմբերին ուսանող Աշոտ Աթանասյանի հետ նորեկ պատանի բանաստեղծը անց է կացնում մի քանի օր. «Գեղեցիկ տեղ էր Օբերհոլցը, սոճի աննման անտառներ, ծառերը շարք շարքի, հսկա զորասյունների նման կանգնած շարքերով, երկայն ու կանաչ... Ճաշից հետո ժամը 3-ին երկուսովս թեթև ծանրոցով ոտքով ուղևորվեցինք Օբերհոլց...»²: Օբերհոլց հասնելուն պես պատանի բանաստեղծը, թռչունների երգով զմայլված, ամբողջ օրը «անհայտանում» է անտառում և միայն երեկոյան վերադառնում՝ անտառային ծաղիկների մի փունջ ձեռքին ու ընկերոջը ցույց տալիս իր ծոցատետրը: Վերջինս, որ խիստ զայրացած ու անհանգստացած էր անփորձ նորեկի անհայտանալու համար, խլում է նրա ձեռքից ծոցատետրն ու կարդում անտառում գրած ոտանավորը: «Ես հիացած էի, հիշեցի Հայաստանի Շիրակի մաճկալին, լուսնկա գիշերը,— պատմում է հուշերի հեղինակը:— Աննման է, ասի, մոռացած իմ բարկությունը, դու լավ բանաստեղծ ես, ապրես...»³:

¹ Ինչպես անտիպ բանաստեղծությունները, այնպես էլ օգտագործված նախնական բնագրերը վերցրել ենք ՀՍՍՀ Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (ԳԱԹ) պահվող Ավ. Իսահակյանի ձեռագրերի ֆոնդից:

² Ա. Աթանասյան, Հիշողություններ (ԳԱԹ, Աթանասյանի ֆոնդ, № 54):

³ Նույն տեղում, № 63:

Այսպես, 1893 թ. սեպտեմբերին, օտար երկնքի տակ, Օբերհոլցի սոճիների անտառում է ծնունդ առել հայ ժողովրդի սիրած երգերից մեկը՝ «Մաճկալ ես, բեզարած ես...»:

1950 թ. մարտի 19-ին, վերհիշելով ոտանավորի գրության հանգամանքները, վարպետը պատմել է. «Օբերհոլց գյուղում (Լայպցիգի մոտ) գյուղատընտեսության ուսանող Աշոտ Աթանասյանը փորձեր էր կատարում: Մի օր էլ ինձ հրավիրեց, որ ես էլ գյուղատնտես դառնամ: Այստեղ գրեցի «Մաճկալ ես...»-ը: Երբ գրածս Աթանասյանին կարդացի, կատակով ասաց. «Ա՛յ, հիմի գյուղատնտես կդառնաս...»:

Եվրոպայի գյուղական միջավայրում մերն եմ հիշել, վերապրել...»⁴:

Գերմանական գյուղ, որքա՛ն տարբեր էր այն նահապետական հայ շենից, ավանդական այն կենցաղից, որ մինչ այդ ճանաչել ու սիրել էր պատանի Ավետիքը: Նրա առաջ Քթաղաքակրթված» գյուղն էր իր ազատամիտ բարբերով, և այդ հակադրությունը միայն կարող էր ներշնչել այնքան սրտաբուխ մի երգ, որի մեջ գեղջկական պարզ ու պայծառ սիրտ հետ մեկտեղ անհունորեն կենդանի հառնում է հայրենի շենլիկի հեռապատկերը: Բանաստեղծության մեջ ջահել գեղջկուհու սերը չի արտահայտվում հնչուն խոսքերով ու խանդակաթցույցերով, այլ՝ միամիտ, անսեթևեթ պարզությամբ, ըստ որում, անկեղծ նըվիրման վկայությունն են սիրած մարդու քաշած անարատ կաթի սերն ու նրա սպասին կապած ալ-զոգնոցը:

Օբերհոլցում, հավանորեն 1893 թ. սեպտեմբերին, Իսահակյանը գրել է նաև «Հովը փշում է լեռների լանջից» բանաստեղծությունը, որը նրա անտիպ ժառանգության լավագույն կտորներից է:

Պոեզիայի աշխարհում բազմաթիվ են հետաքրքիր զուգորդումները, որոնք հնարավորություն են տալիս որոշելու բանաստեղծներին միմյանց կապող և իրարից զատող եզրերը: Երկու ուսանող բանաստեղծ՝ Ավետիք Իսահակյանը և Լևոն Շանթը. գրեթե միաժամանակ Գերմանիայում գրեցին երկու բանաստեղծություն՝ նվիրված անտառին: «Անտառի երգը» բանաստեղծության մեջ (Լայպցիգ, 1894 թ., մայիս) Շանթը բնությանը նայում է երաժիշտ-գեղագետի հայացքով, իբրև արվեստի ստեղծագործության, ավելի ճիշտ՝ երաժշտական սիմֆոնիայի.

Խոր մութին մեջ պահվրտած
Հովը կը սուրա
Հանկարծ քունես սթափած
Անտառին վրա.

Ու կը խոնին ճյուղ ու ոստ
Իրարու ուսին.
Հովի թաքտին տակ ընդոստ
Կ'երգեն միասին:

Ա՛, այդ երգը ո՛րքան մոտ
Ու քաղցր է ինձի.
Բոլոր ձայներն ալ՝ ծանոթ
Սրտիս դրացի...»⁵

4 Ա. Ի ն ճ ի կ յ ա ն, Ավետիք Իսահակյան, Երևան, 1977, էջ 236:

5 «Մուրճ», Քիֆլիս, 1897, № 1, էջ 13:

Ընթերցողի պատկերացմամբ նրա «անտառը» մի բազմալար նվագարան է, որի վրա բնությունը հովի ելեէջներով հնչեցնում է իր բազմաձայն նվագները՝ մերթ թախծալի, մերթ հեզնական: Բայց ամենից ավելի այդ ձայների մեջ նրան լսելի են բնության էրոտիկ զգայախաղերը, սիրո տարփանքն ու նրավաղումը, որ բնորոշ էր երիտասարդ Շանթին:



Սայպիզում սովորող մի խումբ հայ ուսանողներ. առջին շարքում ձախից երկրորդը՝ Ավ. Իսահայան:

Խմբանկարը Հայտնաբերեցինք Ծ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Աշոտ Աթանասյանի ֆոնդում (№ 109), նկարի հակառակ երեսին Ա. Աթանասյանը նշել է լուսանկարման թվականը՝ 1892, Իրականում լուսանկարն արված է 1893 թ. սեպտեմբերին կամ հոկտեմբերի սկզբին՝ Ավ. Իսահայանի լայպիզ Վասնելուց անմիջապես հետո: Խմբանկարը չի պահպանվել ո՛չ բանաստեղծի ընտանեկան արխիվում և ո՛չ էլ նրա տուն-թանգարանում:

Այլ կերպ է ներկայանում անտառը Իսահայանի «Հովը փչում է լեռների լանջից» բանաստեղծության մեջ: Դա մի սոցիալական «ամբոխավող» միջավայր է, ուր բարձրանում է զայրույթի շառաչ և ցավի հեծեծանք: Անտառն ալիկոծվում է իր հուլզերով և ոչինչ չի կարող անդորրել նրա խորացող ու զորացող խռովքը: Անկասկած, բանաստեղծը ներշնչվել է Օբերհոլցի սոճիների անտառի գիշերային պատկերից: Ահա լեռան լանջից հովն ու ճրագի լույսն անտառին կախարդական զրույց են շնչում, աստղ ու լուսին մեղմիկ օրոր են երգում, առուն ու ծղրիղը շքնաղ երազ են հյուսում, բայց անտառը, այդ շառաչող հսկան, չի ուզում քնել:

Հովը փչում է լեռների լանջից.

Հեռու խրճից ճրագը շողում—

Անտառին կախարդ զրույց են ասում:

Սակայն անտառը ականջ չի դնում,

Նա վես ծփանքով շաչում է միայն:

Լուսինն ու աստղեր ամպի ծալքերից,
 Հովվի սրինգն էլ անուշ ձայնակից—
 Անտառին մեղմիկ օրոր են երգում:
 Բայց նա—այդ հսկան շաշում է ուժգին.
 Մոռանալ—նիրհել նա չի ցանկանում:

Առուն խշշում է թփերի ծոցից.
 Գողտուկ խորշերից ծղրիղը ծղրում.
 Անտառին շքնաղ երազ են հյուսում:
 Բայց նա լալիս է տխուր հույզերով,
 Հոգու վերքերից մորմոքներ երգում:

«Աղոթքի բույրը երկինք չի հասնում.
 Ջինջ սիրտը կ'արբի կասկածի թույնով.
 Կյանքի վառ երգը կ'լուծ շրթնում,
 Սիրո ժպիտը կ'թռչնե շուտով:
 Օ՛, ես տանջվում եմ, տանջանք է հուժկու,
 Ա՛խ, մենք բոլոր <ս> վաղն ենք մարելու...»⁶

Ծրկու բանաստեղծությունն՝ «Ծս խփեցի ոգևորված» և «Գիտեմ խաչը ծա՛նր է, հսկա՛», գրված Լայպցիգում նույն թերթիկի վրա և միևնույն օրը՝ 1893 թ. դեկտեմբերի 6-ին, կանխանշում են Գերմանիայում գրած Իսահակյանի բանաստեղծությունների երկու հիմնական մտտիվներ՝ բանաստեղծական սեր և մարդկային տառապանքի վիշտ: Առաջին ոտանավորը կրում է «Բանաստեղծը» վերնագիրը և գալիս է հաստատելու, որ 18-ամյա Իսահակյանը սերը համարում էր իր պոեզիայի հիմնանվազը: Բանաստեղծի սիրտը քնար է. նա զարկում է իր քնար-սրտի լարերին, և հորդում է սիրո երգը.

Ծս խփեցի ոգևորված
 Սրտիս անթիվ լարերին,
 Կուրծքս շաշե՛ց, կուրծքս թնդաց—
 Եվ լարերը կտրվեցին...

Մե՛նակ սիրո լարը մնաց
 Սրտիս անհուն խորքերում,
 Մե՛նակ սիրո երգը շողաց
 Կյանքիս ամեն ծալքերում...⁷

Հետագա մշակման մեջ, բանաստեղծության ոճը հղկելու հետ մեկտեղ, Իսահակյանը դրան կցեց բնապատկերային նախաբան.

Գիշերն եկավ, զով-հովն ընկավ,
 Աստղունք լուսինն ձայն տվին.
 Լուսնյակն ելավ, մով-ծովն ընկավ,
 Հավթերն ինձի ձայն տվին:

Ես վեր ելա ոգի առած՝
 Ջարկի սրտիս լարերին.
 Սիրտս խնդաց, կուրծքս թնդաց—
 Եվ լարերը խզվեցին...

⁶ ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, II, № 1, էջ 21:

⁷ Նույն տեղում, I, № 2, էջ 6:

— Միայն սիրո լարը մնաց
Սրտիս անհուն խորքերում.
Ու վառ սիրո երդը շողաց
Կյանքիս ամեն ծալքերում...⁸

Բանաստեղծական սերը ընտանիքային ամենաքնքուշ զգացմունքն է և զեղարվեստական արտահայտման կատարյալ նրբության ու խորացման է հասել շնորհիվ այն բանի, որ դարերով երգվել ու տառապանքով իմաստավորվել է երգի ու բանաստեղծության մեջ. երաժշտությունն ու պոեզիան նրա մշտական բնակության վերնախորտն են: Եվ պատանի Իսահայանը, որ դեռևս Գեղարվեստի ճեմարանում սովորելիս բանաստեղծական սերը համարում էր իր հովանավորող հրեշտակը⁹, փորձում է թափանցել դրա խորքը և պարզել, թե «Արդյոք այդ սիրո մեջ զարմանալի կերպով չե՞ն միահյուսված մարդկության դարերով ձեռք բերած մորալը, փիլիսոփայությունը. մետաֆիզիկան, էսթետիկան...»¹⁰: Եվ նա հոգևոր բարձր զարգացման հասած բանաստեղծական սերերի շարքում՝ Դանթեի Բեատրիչիի, Պետրարկայի Լաուրայի, Բայրոնի սիրո կողքին նշում է և իր Շուշիկին¹¹:

Լայացիզում ևս Շուշիկի սերն ու պատկերը դադար չեն տվել պատանի բանաստեղծին: Մերժված սերը հեռացող աստղի պես է՛լ ավելի է բորբոքել նրա խանդն ու կարոտը: Եվ մերթ կարոտով, մերթ էլ ցասումով, բայց միշտ՝ տառապանքով, նա դրոշմել է նվիրական անունը լայացիզմի օրագրի գրեթե յուրաքանչյուր էջում: «Սիրտս շուշանի բողբոջի պես բացվում է և արշալույսի շողերը գրկած, ուզում է բուրմունք արձակել—ապագայի, սուրբ ու պայծառ ապագայի բուրմունք»¹²: Ասես այդ սերը վառ պահելու համար նա դողացող ձեռքով ծվատել է իր սրտում բացված շուշանները և սիրած աղջկա անունը կրող ծաղկաթերթերը սփռել օրագրում:

Միայնակ ժամերին նա անվերջ խորհում ու մենախոսում է Շուշիկի մասին, մտալլկանքի մեջ հանդիմանում նրան՝ նա ապառաժ էր, ինքը եկավ մրրիկի պես շաշեց մոտը, բայց նա մնաց ժայռ, քար-անտարբեր¹³: Քար է դարձել այն սերը, որը կենսատու աղբյուր էր պատանու համար. բանաստեղծական այս պատկերն է արտահայտված 1894 թ. նոյեմբերի 16-ին գրած մի ոտանավորում.

Երազ տեսա—Ձեր տան առաջ
Ջուլալ աղբուր կ'ըխեր.
Ձենը մեղմիկ, քաղցրակարկաչ,
Չորս դին անո՛ւջ ծաղկունք էր:

Ես էլ ծարավ, պապակ էի.
Ասի—կուշտմ՛ ջուր խմիմ.

⁸ Ավ. Իսահայան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1973, էջ 39: Բանաստեղծությունը վերամշակվել է 1895 թ. օգոստոսի 5-ին, Արգինայում. «Յառաջաբանի տեղ» վերնագրով առաջին անգամ տպագրվել է 1897 թ. «Երգեր ու վերքեր» ժողովածուում: Դրանով է բացվում գիրքը և սիրային բանաստեղծությունների շարքը: Հետագայում 2-րդ տան 4-րդ տողի «կտրվեցին» բառը բանաստեղծը փոխարինել է ավելի բարեհնչուն «խղվեցին»-ով:

⁹ Ավ. Իսահայան, Հիշատակարան, Երևան, 1977, էջ 23:

¹⁰ Նույն տեղում, էջ 67:

¹¹ Նույն տեղում, էջ 176:

¹² Նույն տեղում, էջ 170:

¹³ Նույն տեղում, էջ 90:

Վրա սրծա... մեկ էլ մեկեն
Ցամբավ աղբուրն, քար դառավ:

Քնից զարթնա, սիրտս էր տխուր-
Ա՛խ, էս շա՛տ վատ երազ է.
Ծարավն ես եմ. գո՛ւն—աղբուրը
Սերդ ինձ համար ցամբեր է...¹⁴

Աղբյուրի պես կարկաշող պարզ, անպաճույճ տողեր՝ մի կերպ իրար բերած հանգերով, ռամկառճ լեզու՝ այս ամենը ոտանավորը դարձնում են ժողովրդական երգին համարժեք: Ծրագրում աղբյուրի ցամաքելն իբրև շարագուշակ նշան մեկնելու պարզունակ հավատալիքը Իսահակյանը օգտագործել է սիրած աղջկա դրժումը, որ կար արդեն նախորդ երգերում, նոր ոճ ու պատկերով վերարտադրելու համար: Այստեղ միանգամայն բնական ձևով դրսևորված է ռոմանտիկական բանաստեղծությանը բնորոշ գեղարվեստական հնարանքներից մեկը՝ երազը որպես իրականությունը բացահայտելու այլաբանական միջոց, որ բանաստեղծի հաջորդ շրջանի պոեզիայում ավելի հաճախ է հանդիպում:

19-ամյա Դուրյանի հոգու մեջ նայեցին երկու հմայիչ աչեր, և նրան թրվաց, թե լուռ ու անվրդով լճակն էլ իր նման դյուրված է գեղուհու նայվածքից.

Ինչո՞ւ ապշած են, լրճա՛կ,
Ու չ'են խայտար քու ալյակք,
Միթե հայվույդ մեջ անձկավ
Գեղուհի՞ մը նայեցավ¹⁵:

Նման քնարական շեշտերը հարազատ էին և 19-ամյա Իսահակյանին, ինչպես հետևյալ անտիպ կտորում (9 դեկտեմբերի 1894 թ., լայպցիգ): Նրա սիրտն էլ լուռ ու վճիտ լճակ էր, բայց երկու սև աչեր խոռվեցին բանաստեղծի անդորրը.

Սիրտս լի՛ճ էր—չինչ ու լուհի
Գարնան հովով կ'ծփար—
Դու մոտեցա՛ր, սիրուն աղջիկ,
Ու սրտիս մեջ նայեցա՛ր...

Երկու կայծեր քու աչերից
Սև աչերից ցատկեցին
Սև կայծերը բնկան սիրտս
Անդորր լիճը հուզեցին...¹⁶

Այստեղից ընդամենը մի քայլ է մենում մինչև Իսահակյանի սիրո երգերի գլուխգործոցը: Եվ որքան քիչ բան էր հարկավոր, որպեսզի բանաստեղծությունը ենթարկվեր հրաշագործ կերպարանափոխման.

Տես իմ սիրտըս—արուն-ծով է.
էս շարքերը զարկեցին.

¹⁴ ԳԱՔ, Իսահակյանի ֆոնդ, I, № 8, էջ 34: Առաջին անգամ լույս է տեսել «Մուրճում» (1894, № 6)՝ «Ժողովրդական մոտիվ» վերնագրով:

¹⁵ Պ. Դ ու Ր յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1971, էջ 52:

¹⁶ ԳԱՔ, Իսահակյանի ֆոնդ, II, № 14, էջ 2: Ինքնագրի լուսանցքում բանաստեղծը նշել է՝ «չեռտյ կ'ուղղեմ», բայց, ըստ երևույթին, այլևս չի անդրադարձել:

էն օրվաննն գագար լուսիմ,—
Սև աշերը մի սիրե...17:

Բանաստեղծը հեռու քաղաքից փորձել է նաև հաշտության ձեռք մեկնել սև աշերով աղջկան, նամակներ, և, թերևս, բանաստեղծություններ է փոխանակել հետը: 1894 թ. նոյեմբերի 1-ին հիշատակարանում գրած հետևյալ տողերը, հավանորեն, քաղված են այդպիսի մի նամակից. «Շուշիկ ջա՛ն, շէի ուղում քեզ նամակ գրել, բայց ստիպմամբ, ներքին ուժով—ակամա, հակառակ կամքիս գրեցի»¹⁸: Թերևս Շուշիկն էլ հենց այդ ժամանակ է պատասխանել նրան, քույրական գորով հաղորդելով միտումնավոր շեշտված եղբայր բառին. «Ծղբայր շան, համակրելի, թանկագին, ամենասիրելի եղբայր...»¹⁹:

Իսահակյանի պատանեկան տարիների մի ձեռագիր տետրում գտնում ենք երկու անթվակիր ոտանավոր հետևյալ խոստան վերնագրերով՝ «Նվեր՝ սիրելի քույր-Շուշիկին իր եղբայր-Ավետիքից» և «Պատանու գերեզմանը (Ալեգորիա Շուշիկի «Կույսի գերեզման»-ին)»: Անվանի իսահակյանագետ Ա. Ինճիրկյանը փորձել է որոշել ոտանավորների գրության ժամանակը և իր ձեռքով, ինքնագրերի լուսանցքում անկյունավոր փակագծերում, նշել համապատասխանաբար 1894 և 1895 թվականները, հավանորեն հիմք ընդունելով գրանցում արտահայտված սիրո դրժման մոտիվը: Այլ խոսքով, նշված ոտանավորները նա վերագրել է բանաստեղծի լայսցիզյան շրջանին և դրան հաջորդող ամիսներին: Բերենք այդ անտիպ բանաստեղծությունները:

Նվեր՝ սիրելի քույր-Շուշիկին իր եղբայր-Ավետիքից

Երբ սրտամաշ վշտի ժամում
լիճ են լինում աշերս,
Երբ տանջանքի աճեղ բովում
խորտակվում է հեզ սիրտս—
Քու սուրբ սերն է, որպես երկնի
Սփոփարար հրեշտակ
Ցաված սրտումս վառում էլի
Դեռ ապրելու ջերմ փափագ:

Բայց ուրացա՛ր փնձ, նազելի՛,
Վիշտը ճնշեց իմ կուրծքը.
Մարեց սերը, մարեց կյանքի
Վառ ցանկության կրակը:
Ծվ դո՛ւ անհոգ, որպես թռչնիկ
Շիրմիս վրա ճախրում ես.
Արդյոք անգութ, անվիշտ քուրի՛կ,
Խենդճ եղբորդ հիշում ե՞ս...20

<1894>

17 Ա. Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 77:

18 Ա. Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Հիշատակարան, էջ 75:

19 Նույն տեղում, էջ 188:

20 ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, II, Ձճ 1, էջ 3:

«Պատանու գերեզմանը (Ալեգորիա Շուշիկի
«Կուլյսի գերեզման»-ին)»

Սարի ստորոտում, լայնարաց դաշտում,
Ծաղիկների մեջ կար մի գերեզման,
Անդ պատանին էր տանջված հանգում,
Պատանին բարի հրեշտականման:

Խոնավ ու տխուր այս մուսլ շիրմում
Ննչում էր «ներա» սիրտը շանթահար.
Ծաղիկն պսակ մտատանջ գլխուն,
Կրճին հանգում էր փնջիկ դալկահար:

Հանգիստ էր խաղաղ բոլոր բնություն,
«ներա» ուրվականն էր միայն թափառում,
Ահնդ վրժի հույսը դեռ սրտում
Պատերազմ կ'եններ մահվան ախարհում:

— Ո՞վ կեններ «ներա» դիմաց պատերազմ,
— Ո՞վ մթության մեջ կ'տեսներ «ներան».
Անգութ աղջկա միակ սառը սիրտ
Փախում էր արագ խղճից հալածված:

— Անցնում են ժամեր, օրեր, տարիներ,
Բայց ուրվականը դեռ թափառում է,
Խղճահար սիրտը թշվառ աղջկա
Դեռ հանգիստ հարվածից «ներա»²¹:

<1895>

Անտարակույս է, սակայն, որ պատկերային և ոճական առումով վերջին երկու ոտանավորները վերաբերում են ավելի վաղ շրջանի: Ավելի ստույգ, վերոհիշյալ ձեռագիր տետրը, որ սկսվում է այդ երկու ոտանավորով, բանաստեղծի կողմից թվագրված է 1892-ի մայիսի 15-ի տարեթվով, ուրեմն և դրանք չէին կարող 1894 կամ 1895 թվերին գրված լինել:

Ավելորդ չէ նշել, որ սիրո դրժման մոտիվը կրկնվում է նաև այդ շարքի մյուս բանաստեղծություններում՝ «Հոգուս լարերը էլ չեն մրմնջում», «Դավաճանության օրերում» և այլն:

Գեղեցիկ գերմանուհիների մեջ բանաստեղծը հուսահատ փնտրում է իր կորած սիրո պատկերը՝ սևաչյա, մրահոն: «Այսօր, — գրել է նա 1894 թ. դեկտեմբերի 16-ին, — տեսա Շուշիկի նման մի պատկեր — սիրտս լցվեց... այն գեղեցիկ պատկերը, մի սևաչյա կուլյսի պատկերը — այնքա՛ն պայծառ, մաքուր դեմքով, այնքա՛ն սև, ու խորն, ու վշտոտ, մշուշոտ աչքեր, թարմ ու անմեղ ժպիտ — ... սիրտս մի երջանիկ, անուշ ու բարձր զգացմունքով լիքն էր. ևս ուզում էի համբուրել այդ չքնաղ պատկերը և լալ... Ես ուզեցա ապրել, սիրել ու գրել. մեջս բանաստեղծելու ուժ զգացի»²²:

Այսպես, Իսահակյանը հետզհետե փարում է սիրո գաղափարի այնպիսի վերացարկման, որ գերծ է որևէ օրգանական, զգայական միտումից: Դա Շու-

²¹ Նույն տեղում, էջ 4: Ընդդ՛ումները հեղինակին են: Ոտանավորի վերջին տողում պակասում է ստորագրվել:

²² Ավ. Իսահակյան, Հիշատակարան, էջ 135:

շիկի անունն ու պաակերը կրող բանաստեղծական սիրո այն տեսիլն է, որն այլևս երբեք նա չգտավ իր իսկ՝ կենդանի և իրական Շուշիկի մեջ: Այդ մրանն ու սևաշյա կույսի մտատիպարը նա փնտրել է ամենուրեք՝ թե՛ ուսանողական լայնացիքում, թե՛ ավագ տարիներին՝ Վենետիկում, թե՛ ժամանակի ու տարածության անվախճան հոլովույթի մեջ, հոգեթափառման հավիտենական ասանասարայի» ընթացքին կամ նիցշեական հավերժական դարձի շրջապատույտում, որոնց պոետական սքանչելի անդրադարձն է աշավերթությունս արձակ պոեմը (1919, Լյուցերն). «Պանդխտական ուղիներինս վրա ես հանդիպեցի իմ սերին... նստեցինք իրար մոտ, և երկար նայում էինք միմյանց,— և մեր հոգիները հանկարծ լուսավառվեցին հավերժի հիշողությամբ— ճանաչեցին իրար, իմ հոգին, նրա հոգին»²³, Իսահակյանի սիրո պոետիան հարածամ նորոգվող այդ տառապանքի ծնունդն է և, ինչպես գեղեցիկ կերպով արտահայտվել է Շոպենհաուերը իտալացի մեծ բանաստեղծի՝ Պետրարկայի մասին, միայն մի անկատար բաղձանք մատնեց նրան ողջ կյանքում այն հուսահատ վշտին, որ այնպես սրտառուչ հուզում է մեզ նրա քերթվածներում, քանզի Դափնեն²⁴, որին նա հետապնդում էր, պետք է խույս տար նրա գրկից, որպեսզի իր փոխարեն թողներ նրան անմահության դափնի»²⁵:

Լայպցիգում գրած բանաստեղծությունների երկրորդ շարքի համար, ինչպես նշվեց, բնորոշ է մարդկային տառապանքի թեման, համաշխարհային վիշտը:

Ի պատիվ պատանի Իսահակյանի պետք է շեշտել, որ, հակառակ անձնական սիրո մորմոքին, նրա համար բնորոշը էզոցենտրիկ պոեզիան չէ: Նա արտասվում է օտարի վշտով, կարեկցանքի ձեռք մեկնում տառապող անհատին և սեփական անձը դարձնում նրա համար խարիսխ ու նեցուկ: Այդ ոգով է գրված 1893 թ. դեկտեմբերի 6-ի լայպցիգյան առաջին ոտանավորներից մեկը.

...—«Գիտեմ խաչը ծա՛նր է, հսկա՛,
Ո՛վ մարդ-եղբայր-ընկեր ի՛մ,
Քեզ մո՛տ, քեզ մո՛տ կուգամ հա՛մ,
Կրձքիս սեղմիմ, արտասվիմ.
Նս է՛լ քեզ պես օր ու գիշեր
Անհո՛ւն, անհո՛ւյս տանջվել եմ.
Ա՛ն համբույրս, շարքաշ ընկե՛ր,
— Առա՛ջ... Հասավ ժամն արդեն...»²⁶

Նիցշեական գերմարդի կերպարում երիտասարդ բանաստեղծը կաղապար-

²³ Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1975, էջ 56—57:

²⁴ Դափնեն—հին հունական դիցաբանության մեջ հավերժահարս, որը Ապոլոն աստծո սիրահետումներից փախչելով՝ դառնում է դափնեծառ:

²⁵ A. Schopenhauer, Die Welt als Wille und Vorstellung, erster Band, Leipzig, 1873, S. 468—469.

²⁶ ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, I, № 2, էջ 6: Բանաստեղծն ինքնագրում փոխել է 2-րդ տան 3-րդ տողը՝ «Տուր ձեռքդ ինձ, շարքաշ ընկեր» և ավելացրել. «Ընտրությունը թողնում եմ ձեզ—ես չկարողացա ընտրել—Ախ»: Բանաստեղծությունն առաջին անգամ թնորքների և մորմոքների խորագրով լույս է տեսել «Մուրճում» (1899 թ., № 1, էջ 45), իսկ երկրորդ անգամ՝ 1903 թ. «Բանաստեղծություններ» ժողովածուում:

1896 թ. սեպտեմբերին, աղգային-աղատագրական շարժմանը մասնակցելու մեղադրանքով գտնվելով Երևանի բերդում, Իսահակյանը կրկին անդրադարձել է այս ոտանավորին և նախակցել ևս մի քառատող (ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, I, № 8, էջ 4), որը, սակայն, տպագրի-

րում էր անձնազոհ մարդասիրության իր իդեալը, որ ոգեշունչ կերպով արտահայտել է 1894 թ. մայիսի 29-ին Լայպցիգում գրած բանաստեղծության մեջ.

Կենսական ծովի հույզերի միջին
 Ես ժայռի նման կանգնած եմ ամուր.
 Կայծակն է զարկում իմ վեա ճակատին,
 Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
 Հողմ ու փոթորիկ շուրջըս են հածում,
 Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
 Գոռ ալիքները կուրծքս են ծեծում,
 Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
 Ինձնի՞ց բռնեցեք, խորտակվող մարդիկ,
 Ես ժայռի նման կանգնած եմ ամուր,
 Զեր խարխսները ոտքիս տակ ձգեք,
 Ես ժայռի նման կանգնած եմ ամուր²⁷:

Կենսական ծովի ալիքների մեջ անսասան կանգնած ժայռ-մարդու կերպարն այն ինքնատիպ իսահակյանական գերմարդն է, որ պիտի անցներ նրա ողջ պոեզիայի միջով և ունենար իր բազմաթիվ կերպարանափոխումները՝ ամբոխի համար նահատակվող մարգարեն, ժողովրդի ազատության համար տառապող Մասսա Մանուկը, Արծվամանուկը, Լեռների հսկան, դուցազնական Մհերը: Ոչ թե գերբնական, աննպատակ, մրրկալից ուժ կամ մեծամիտ անձնապաստանություն, այլ ոգու անսահման կարեկցանքն է Իսահակյանի գերմարդու հատկանիշը:

1895 թ. հունվարի 8-ի մի գրառման մեջ գտնում ենք մտքեր, որ կարելի է դիտել իբրև ծանոթագրություն վերը բերված բանաստեղծության համար և առավել բացահայտում են բանաստեղծի մտահղացումը. «Ես տիեզերքի եզերքն եմ—ես հերոս եմ, ինձնից է սկսվում ամեն մի ճշմարիտ բան. ես այն ամին եմ, ուր կյանքի խարխսին է ձգված. այս ամից բռնեցեք, ո՛վ մարդիկ, և կտեսնեք լույս ու կյանք:

Հերոսը տիեզերքի եզերքն է—ողջ ալիքները դիպնում են նրան, և նա մնում է ամուր, պայծառ ու կենսատու»²⁸:

Այսպիսին է Իսահակյանի գերմարդ-հերոսը:

Համաշխարհային վշտի բնորոշ նմուշ է 1894 թ. օգոստոսի 5-ին գրված «Ես չեմ ուզում արև ցոլա» բանաստեղծությունը, որտեղ պեսիմիստական կենսափոխումը հասնում է իր բարձրակետին: Եթե մարդու ճակատագիրը տառապանքն է և բնության օրենքն անխուսափելի անհրաժեշտություն, ապա ուրեմն թո՛ղ անէանան և արև ու վարդ, աստղունք ու ծառ, ծով ու ցող և այլն.

Ես չեմ ուզում կյանքը վխտա
 Հոգնած երկրում ամեն-տեղ.

տարբերակից դուրս է մնացել: Սրանով իսկ բանաստեղծության մեջ արտահայտված վիշտը՝ ձեռք է բերում սոցիալական տառապանքի իմաստ.

Տխուր լուսնի ցուրը ծորեց
 Նեղ լուսանցքից իմ հոգում,
 Ինչպես կայծակ. նա բորբոքեց
 Սերս ու իղձս վառվռուն:—
 — Գիտեմ—խաչդ ծա՛նր է, հսկա՛ և այլն:

27 Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1973, էջ 40:

28 Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Հիշատակարան, էջ 154—155:

*Օ՛, հերիք է մարգր սողա
Մերուկ երկրում ամեն տեղ:*

*Տիեզերքը թո՛ղ շունչ գտնա
Թո՛ղ ծավալվի լուսություն,
Ա՛խ, ես ցնդվեմ, սիրտս հովնա—
Անվերջ, հավերժ անդո՞րր քուն...29*

Մարդկային հոգիների ուժացման այդ հասարակության մեջ օտարի ցավով ապրող բանաստեղծն ինքը մատնված էր նյութական ծանր վիճակի: Զբոսական քնքերով լի երկու տարվա կյանք հեռավոր եվրոպական քաղաքում, և ոչ մի կողմից հույս ու կարեկցանք: Նա առավել ցավազնորեն է վերապրում շրջապատող մարդկանց անտարբերությունը և սփոփանք է գտնում իր մենությունը կեր-խոհների մեջ.

*Ապրում եմ մենակ, մարդկանց մեջ օտար,
Նրանց տըքերը ինձ չեն ողջունում.
Մարդկանց սրբտերը փակ են թնձ համար
Եվ նրանց հողին ձայնըս չի լսում...:*

*Իմ ընկերները—իմ խոր մըտքերն են,
Որ վե՛հ թևերով անհունն են պատում.
Այն վառ աստղերը—գըթոտ աշքերն են,
Որ վըշտիս ժամին ինձ քաղցր են ժպտում...30*

Իսկ երբ վե՛հ մտքերն ու իդեալներն էլ անդոր են օգնել, այնժամ բանաստեղծին սփոփանք է բերում ժողովրդի երգչի՝ աջուղի խաղը, և նա վշտացած սիրտը դատարկում է աշուղական հանգով հյուսած երգի մեջ.

*Սև վշտերը մշուշի պես
Ցաված սիրտս պատել են,
Կնճիռները ամպերի պես
Ճակտիս վրա դիզվել են...:*

*Աշուղ սաղո առ ու երգի՛ր—
Երգը երկնի դեփյուռն է, (թող նա սրտիս)
Աշուղ երգիր—
Ամպն ու մշուշը ցրե՛՜՜ն:*

Մայրական թեմային նվիրված Իսահակյանի բանաստեղծությունները գրված են բացառապես ժողովրդական շնչով ու ոճով. գրանցում բանաստեղծը կենդանագրել է նահապետական գործվագութ հայ կնոջ կերպարը: Մորը նվիրված նրա յուրաքանչյուր ոտանավորում մայրական սիրո պաշտամունքի հետ զգացվում է և հայրենաբաղձության թախիժը: Հայրենիքի զաղափարը նրա հոգում խտանում է մոր պատկերի մեջ և ստեղծում այն նվիրական տեսիլը, որ ողջ կյանքում և, մանավանդ, օտարության մեջ անմեկին ուղեկցեց նրան, ու հայրենի երկրից հեռու տասնյակ տարիներ բորբոք պահեց նրա հոգում հարազատ ժողովրդի սերը: Հիջենք թափառումների տարիներին (1919 թ.) գրած հետևյալ տողերը.

29 ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, I, № 8, էջ 6—7: Առաջին անգամ տպագրվել է «Մուրճում» (1898 թ., մայիս, № 5, էջ 659), իսկ վերջին անգամ՝ «Երգեր ու վերքեր» ժողովածուում, 1908 թ.:

30 Ա.վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 41: Առաջին անգամ տպագրվել է «Մուրճում» (1898, № 7—8, էջ 1053):

31 ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, II, № 14, էջ 3:

Ծրագրի մեջ Անին տեսա,—
Տեսա մեռած մայրիկիս...³²

Հայրենիքը կենդանի մոր տիպարն է, իսկ մեռած մոր պատկերը բանաստեղծի ներզգայության մեջ զուգորդվում է կործանված շքեղ Անիի հետ:

1894 թ. դեկտեմբերի 9-ին, նյութական ու հոգեկան ծանր վիճակում, Իսահակյանը Հայացիգում գրում է «Ուռենու տակ մենակ նստած» բանաստեղծությունը, որը լի է մորն այլևս չտեսնելու հուսակտուր տազնապով.

Ուռենու տակ մենակ նստած՝
Տխուր-տրտում երգեցի...
Սիրտս—ծփաց, ուռին խլլաց
Տխուր-տրտում լացեցի...³³

Բանաստեղծության վերամշակված տարբերակում, որ առաջին անգամ լույս տեսավ 1901 թ. ապրիլի 29-ին «Տարազում» (№15), բանաստեղծը մոր կերպարն ընդգծելու համար հիմնովին փոխել է առաջին տունը և ավելի բացահայտել ու ամբողջացրել ոտանավորի տրամադրությունը.

Մայրս տեսավ ինձ ջա՛տ տխուր,
Շա՛տ հուսահատ, մեկուսի.
Գիրկն առավ, սրտին կպա,
Ու լցվեցի ու լացի³⁴:

Հայացիգի կենտրոնից՝ Ավգուստյան հրապարակից մինչև երկաթուղու գլխավոր կայարան ձգվում էր Գյոթեշտրասեն, որի աջակողմում գտնվում էր կարապի լիճը՝ շրջապատված վարսավոր ուռիներով: Շրջել է այստեղ բանաստեղծն իր խորասուզման պահերին, հիացել լճի վրա սահող կարապներով և մտորել գերմարդու իդեալի մասին: Լճափին նստած նա կարոտով հիշել է մորը և հյուսել Հայացիգյան 12 նամակ-բանաստեղծությունների շարքը, որոնցում հեռվից-հեռու խանդաղատանքով զրուցում է մոր հետ ու մոր մասին. «Երբ գիշերը վար է իջնում աստղի ցողերի հետ երկնից, երբ հովերը «կարապի լճի» վրա սահում են, երբ ալիքները երգում են—լուռ ու խորին երգեր,—որդիդ նստում է ծառի տակ, գլուխը դնում է ձեռքի վրա—լճի հետ երգում է, ուռու հետ խշշում, և լուսնի շուշան փողին համբուրում է որդուդ հոգնած ճակատը, այն ժամանակ, մայրի՛կ ջան, այն ժամանակ, Շուշի՛կ ջան, արցունքի պես, աստղի պես շողում եք իմ առաջ,—և ես լալիս եմ—առանց արցունքի—օ՛, ես կցանկանամ ձեզ հետ միասին... փաթաթվել կարապի վզով և լողալ կապուտակ-աստղ <ալից> երկնքում, թո՛ղ կարապը երգե—վերջին երգերը, թող մենք ծփանք աստղերի ալիքների մեջ... և կարապի մարող հնչյունների պես հալվենք բնության մեջ...»

Օ՛, ես ձեզ հետ մեռնել եմ ուզում—բնության կյանքն եմ ուզում...

Ասացե՛ք մայրիկիս, որ բնության կյանքը մահն է, լուռություն է հավիտենական...

Ասացե՛ք, որդիդ քեզ հետ մեռնել է ուզում...»³⁵,

32 Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկեր, հ. 1, Երևան, 1958, էջ 307:

33 ԳԱԹ, Ի ս ա հ ա կ յ ա նի ֆոնդ, II, № 14, էջ 3:

34 Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 44:

35 Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Հիշատակարան, էջ 195—196:

Իսահակյանի մոտ մայրական սերն այն մեծ զգացումն է, որի առաջ անվերապահ խոնարհվել է բանաստեղծի հպարտ հոգին: Սոնետներից մեկում Հայնեն խոստովանում էր, որ ինքը երբեք գլուխ չի խոնարհել արքաների առաջ, բայց մոր առջև դառնում է հեզ ու վարանոտ³⁶: Օտար միջավայրն ու մըշտական կարիքը խորացրին Իսահակյանի հոգում մայրական կարոտը և այդ կարոտը կաղապարեց նրա պոեզիայի լուսավոր կերպարներից մեկը՝ մոր կերպարը: Մորն էր նվիրված Գերմանիայում (Դրեզդեն) գրած թե՛ առաջին ոտանավորը, թե՛ վերջինը՝ «Մայրիկ հիվանդ եմ, սիրտըս քրքրված», որ Իսահակյանը գրել է Հայաստան վերադառնալու օրերին՝ 1895 թ. մայիսի 13-ին (25-ին) Բեռլինում: Բանաստեղծության մեջ մայրական թեման միահյուսված է համաշխարհային վշտի հետ: «Երկնքի ցավ» ասելով՝ բանաստեղծը, մոր համար հասկանալի լեզվով, նկատի ունի տիեզերական կամ համաշխարհային վիշտը:

Մայրի՛կ, հիվանդ եմ երկընքի ցավով,
Տե՛ս, ինչպե՛ս դառն երգում եմ երգեր
Անհուն վըշտերի, տանջված մըտքերի.
Մի՞թե կարող ես երգերս մարել,
Որ տիեզերքի հսկա վերքերի

Ցավն ու կըռկիծն են...³⁷

Առաջին հայացքից տարօրինակ կարող է թվալ երկու հակադիր թեմաների համատեղումը մի բանաստեղծության մեջ: Թվում է, թե որևէ կապ չի կարող լինել մայրական պարզ ու վճիտ կերպարի և համաշխարհային վշտի խիստ վերամբարձ թվացող գաղափարի միջև: Այս է պատճառը, որ Նիկոլ Աղբալյանը դժվարանում էր հասկանալ բանաստեղծության բուն միտումը³⁸:

Համաշխարհային վիշտը, կյանքի և մահվան մշտամորմոց խորհրդածումները, տիեզերական հեռունների կարոտը—խորացրին Իսահակյանի հոգու և պոեզիայի տրագիզիան: Բայց նա չդարձավ սոսկ «տխուր կերպարի» բանաստեղծ, առավել ևս մթապաշտությունն անհարիր էր նրա պոեզիայի լուսավոր թախծին: Իսահակյանի համաշխարհային վիշտը բխում էր նրա կենսասիրությունից և անհրաժեշտաբար հանգեցրեց կյանքի հաստատման այն համոզմունքին, որ մարդը բնության հրաշքն է: Այդ հրաշքը ծնող մայրական գիրկը պատսպարել է նրան երկրային ու տիեզերական թափառումներից հետո, ամոքել նրա «երկնքի ցավը», ումանտիկ բանաստեղծի քրքրված (Հայնեի խոսքով՝ պատառոտված) սիրտը: Եվ ինչպես բացատրել է Դ. Դեմիրճյանը,

36 Զ. Հայնե, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1958, էջ 87:

37 Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 45:

38 1898 թ. մարտի 15-ին Ավ. Իսահակյանի նոր լույս տեսած «Երգեր ու վերքեր» գրքուկի առթիվ Դ. Դեմիրճյանը նրան գրել է. «Ամբողջ օրերով ես ու Նիկոլը նստած քո «Թարիֆ»-ն ենք անում, քո երգերն ենք եղանակում»:

Քննադատությունը չի գրում, որովհետև ուղում է դեռ էլի շատ կրկնել. գիտես նա ինչքան սիրեց էդ քո «անտերները» (կատակով ակնարկում է ոտանավորները—Ա. Մ.): Էն քո «Մայրիկ հիվանդ եմ»-ը չէր ուղում հասկանալ. գլխին բամբեցի, որ քլինի եղած հասկացած» (ԳԱԹ, Գ. Լսոնյանի ֆոնդ, № 2680):

Իսահակյանի «Երգեր ու վերքեր» առաջին ժողովածուի մասին Ն. Աղբալյանի գրախոսությունը՝ «Երգ ու վերք» վերնագրով, լույս տեսավ 1898 թ. «Մուրճ» հանդեսի № 6-ում, էջ 839—855:

«ամենահեռու տիեզերական ինքնաքսորի հեռաստաններից» նա միշտ վերադարձել է գեպի մայրը, գեպի Մեծ Մայրը՝ հալ ժողովուրդը³⁹։

Իսահակյանի լայպցիգյան ասրիների պոեզիայի պատկերն ամբողջացնելու համար հարկ է նշել, որ բացի խոհաքնարական բանաստեղծություններից, լայպցիգում նա հղացել է հալ ժողովրդական էպոսի ու ավանգուսիտների թեմաներով արձակ ու շափածո գործեր։ 1894 թ. սեպտեմբերին այստեղ ավարտում է «Իրիցկնկա աղբուրը» շափածո լեզվովը. նույն թվականին գրում է և «Իգիթ Սարգար» գրույցը՝ արձագանքելով Սասունում թուրքերի կաղամկերպած հայկական արյունալի ջարդերին։ Միաժամանակ բանաստեղծությունների թարգմանության փորձեր է կատարել գերմանացի հեղինակներից (Հայնե, Նիցշե, Շլաֆ, Շեքրարա)։ Թեև այդ թարգմանությունները ևս մնացել են անտիպ, բայց որոշակի արժեք են ներկայացնում նշված շրջանի իսահակյանի բանաստեղծական նախասիրությունների, ու պակաս նաև դրական ազդեցության ուսումնասիրման առումով։

ЛИРИКА АВ. ИСААКЯНА ЛЕЙПЦИГСКОГО ПЕРИОДА

АЛЬБЕРТ МУШЕГЯН

Резюме

В 1893—1895 годах Ав. Исаакян, будучи вольным слушателем Лейпцигского университета, создал целый ряд стихотворений. Тема любви и тема страдания за судьбы человека—вот характерное содержание его лирики этого периода. В порыве сострадания к обездоленному и страждущему человеку Исаакян в некоторых стихотворениях медитативного характера создает образ сверхчеловека, борющегося против дегуманизации буржуазного общества.

Впервые публикуемые пять до сих пор не известных стихотворений этого периода являются самобытными и яркими образцами поэзии Ав. Исаакяна.

39 Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1963, էջ 283։